# Հետևել Մարգարեներին և Առաքյալներին

Ջեննա Կոֆորդ





Աստված կանչում է մարգարեներ և առաքյալներ, որպեսզի ուսուցանեն մեզ այն, ինչ Աստված ցանկանում է, որ մենք իմանանք: Սուրբ գրություններում մենք կարող ենք կարդալ մարգարեների մասին, ինչպես օրինակ՝ Նոյի, Նեփիի և Ջոզեֆ Սմիթի մասին, և առաքյալների մասին, ինչպես օրինակ՝ Պետրոսի և Պողոսի մասին: Այսօր մենք ունենք մարգարեներ և առաքյալներ:









ՀԱՏՎԱԾՆԵՐ ՆԿԱՐՆԵՐԻՑ. *ՏԵՐԸ ԿԱՏԱՐՈՒՄ Է ԻՐ ԲՈԼՈՐ ԽՈՍՔԵՐԸ*, ՔԼԱՐԿ Ք. ՓՐԱՅՍ; *ՋՈԶԵՖ ՍՄԻԹ ԿՐՏՍԵՐԸ*, ԴԱՆՔԱՐՏ Ա. ՎԵԳԵԼԵՆԴ; *ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*, ՓՈԼ ՄԱՆ; *ՆԵՓԻՆ ԵՎ ԼԵՔԻՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ԵՆ ՆԱՎԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ*, ՋԵՐԻ ԹՈՄՍՈՆ; ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄԸ՝ ԳԱՐԹ ԲՐՅՈՒՆԵՐԻ



## Ի՞նչ է նշանակում «մարգարե, տեսանող և հայտնող»:

**Մարգարեն** խոսում է Աստծո փոխարեն:

**Տեսանողը** կարող է տեսնել անցյալը, ներկան և ապագան:

**Հայտնողը** հայտնում (կամ ցույց է տալիս) մեզ Աստծո կամքը:

- Առաջին Նախագահության բոլոր անդամները մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ են, ինչպես նաև բոլոր Առաքյալները:
- Միայն Եկեղեցու Նախագահն է լիազորված Աստծո կողմից առաջնորդելու ողջ Եկեղեցին:
- Ընդամենը քանի՞ ապրող մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ մենք ունենք:

**12 15 3 1**

Պատասխան. 15



## Ինչո՞ւ է կարևոր մարգարեին հետևելը:

Մարգարեն նման է մեկին, ով դիտում է աշտարակից (տես նաև էջ 38): Նա կարող է տեսնել մոտեցող վտանգը և ասել է մեզ, թե ինչպես ապահով լինենք: Նա օգնում է մեզ հետևել Հիսուս Քրիստոսին:



## Ի՞նչ է մեզ խնդրել անել մեր մարգարեն:

Այսօր մեր մարգարեն Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն է: Ահա մի քանի բաներ, որ նա խնդրել է մեզ անել:

- Հետևեք Հիսուսի օրինակին և սիրեք բոլորին:
- Վճարեք տասանորդ և նվիրաբերություն կատարեք միսիոներական ֆոնդին:
- Հեռու մնացեք վատ ֆիլմերից, հեռուստատեսային ծրագրերից և այլ լրատվամիջոցներից:
- Տաճարի նկար փակցրեք յուրաքանչյուր ննջարանում:
- Ուսումնասիրեք գերագույն համաժողովի ելույթները:
- Այցելեք ծերերին և եղեք լավ հարևան:

Ցանկից ընտրեք մի բան, որը կարող եք անել այս ամիս: Ի՞նչ եք պատրաստվում անել: ■